ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....3

Գյուտեր և օգտակար մոդելներ .....4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ .....7

Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....11

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը և իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը.....13

Միջազգային համագործակցություն .....15

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Արփինե ԵԳԱՆՅԱՆ
Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Դիզայնը և էջադրումը՝ Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. 011 597 537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 011 597 535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

# ՆԱԽԱԲԱՆ

*Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2016 թվականին շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառույթների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:*

# ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

*2016 թվականին Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 94 գյուտի և 32 օգտակար մոդելի հայտ, որոնցից 124-ը՝ ազգային հայտատուներից, 2-ը՝ օտարերկրյա հայտատուներից:*

*2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4328:*

Աղյուսակ 1

| Երկիրը | 2015 | 2016 |
|---|---|---|
| Հայաստան | 167 | 124 |
| Այլ երկրներ | 3 | 2 |
| **Ընդամենը** | **170** | **126** |

*2015 թվականի համեմատությամբ 2016 թվականին ստացված հայտերի ընդհանուր քանակը պակասել է 44-ով, ընդ որում՝ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 43-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 1-ով:*

*Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (Ժնև) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:*

*2016 թվականին գործակալությունը ստացել է 4 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:*

*Այսպիսով, 1994-2016 թվականների ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 89 միջազգային հայտ:*

*2016 թվականին գործակալությունը ստացել է 3 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:*

*Այսպիսով, 1997-2016 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաք-*

վել է գյուտի 42 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 150 հայտով, ընդ որում՝ 86 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 27 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 18 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 13 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին, 6 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2016 թվականին ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 2-ում՝ գրաֆիկի տեսքով: 2016 թվականին ստացված հայտերի բաշխումն ըստ տեխնիկայի բնագավառների բերված է աղյուսակ 2-ում:

2016 թվականին տրվել է գյուտի 93 արտոնագիր և օգտակար մոդելի 44 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 2 արտոնագիր:

2016 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3078 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 201–ը, իսկ օգտակար մոդելի 478 արտոնագրերից գործում են 125-ը:

2016 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 4571 Եվրասիական արտոնագրեր:




Նկ. 1

Նկ. 2




A. Մարդու կենսական պահանջների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Աղյուսակ 2

| No | Բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի) | Ներկայացված հայտերի քանակը | %-ը հայտերի ընդհանուր թվի մեջ |
|---|---|---|---|
| 1-2. | Շինարարություն (E01-E06) | 16 | 12,70% |
| 1-2. | Չափում և օպտիկա (G01-G03) | 16 | 12,70% |
| 3. | Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K) | 11 | 8,73% |
| 4. | Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05) | 10 | 7,94% |
| 5-7. | Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32) | 7 | 5,56% |
| 5-7. | Սննդամթերք և ծխախոտ (A21-A24) | 7 | 5,56% |
| 5-7. | Դեղեր և դեղամիջոցներ (A61K) | 7 | 5,56% |
| 8-9. | Անօրգանական քիմիա (C01-C05, C30) | 6 | 4,76% |
| 8-9. | Մետաղագործություն և էլեկտրոլիզ (C21-C23, C25) | 6 | 4,76% |
| 10-13. | Շարժիչներ և պոմպեր (F01-F04) | 5 | 3,97% |
| 10-13. | Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N) | 5 | 3,97% |
| 10-13. | Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11) | 5 | 3,97% |
| 10-13. | Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47) | 5 | 3,97% |
| 14-24. | Այլ բնագավառներ | 20 | 15,85% |
| | **Ընդամենը** | **126** | **100** |

# ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

*2016 թվականին ազգային ընթացակարգով ստացվել է ապրանքային նշանների գրանցման 1717 հայտ (որոնցից 1261-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ. 3-ում:*

*Ապրանքային նշանների 1565 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Համարվել են հետ կանչված 53 հայտ, 134 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:*

*Գրանցվել են 1564 ապրանքային նշաններ (որոնցից 1148-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2268 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 2387 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրա-*

Նկ. 3



մադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին կայացվել է 713 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 514:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 30 հայտ:

2016 թվականին ազգային հայտատուներից ստացվել է 1261 հայտ, որը 2015 թվականի համեմատությամբ նվազել է 79-ով:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա 2016 թվականին ազգային ընթացակարգով ստացվել է 456 հայտ, որը 2015 թվականի համեմատությամբ նվազել է 99-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն ազգային ընթացակարգով ներկայացվել է 29 արդյունաբերական նմուշի հայտ, որոնցից 23-ը՝ ազգային հայտատուներից: Ստացված հայտերից 23-ը ստացել են վկայագիր:

2016 թվականին ազգային հայտատուներից ստացվել է 29 արդյունաբերական նմուշի հայտ, որը 2015 թվականի համեմատությամբ նվազել է 8-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացվել է 6 հայտ, որը նախորդ տարվա համեմատությամբ 1-ով պակաս է:

Արդյունաբերական նմուշների Հաագայի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 196 ծանուցում:

Աղյուսակ 3

| Երկիրը | | Ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| AM | Հայաստան | 1261 | | 1261 |
| AE | Արաբական Միացյալ Ամիր. | 9 | 7 | 16 |
| AT | Ավստրիա | | 40 | 40 |
| AU | Ավստրալիա | | 4 | 4 |
| BA | Բոսնիա և Հերցեգովինա | 7 | 3 | 10 |
| BB | Բարբադոս | 1 | | 1 |
| BE | Բելգիա | 5 | 48 | 53 |
| BG | Բուլղարիա | 1 | 8 | 9 |
| BH | Բահրեյն | | 2 | 2 |
| BM | Բերմուդա | | 3 | 3 |
| BR | Բրազիլիա | | | 0 |
| BY | Բելառուս | | 28 | 28 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| BZ | Բելիզ | | 1 | 1 |
| CA | Կանադա | 3 | 3 | 6 |
| CH | Շվեյցարիա | 23 | 161 | 184 |
| CN | Չինաստան | 14 | 167 | 181 |
| CA | Կանադա | | 3 | 3 |
| CO | Կոլումբիա | | 1 | 1 |
| CU | Կուբա | 2 | | 2 |
| CY | Կիպրոս | | 40 | 40 |
| CZ | Չեխիայի Հանրապետություն | | 38 | 38 |
| DE | Գերմանիա | 6 | 229 | 235 |
| DK | Դանիա | 4 | 22 | 26 |
| EE | Էստոնիա | | 3 | 3 |
| EG | Եգիպտոս | | 2 | 2 |
| ES | Իսպանիա | | 33 | 33 |
| FI | Ֆինլանդիա | 3 | 19 | 22 |
| FR | Ֆրանսիա | 8 | 108 | 116 |
| GB | Միացյալ Թագավորություն | 13 | 51 | 64 |
| GE | Վրաստան | | 7 | 7 |
| GR | Հունաստան | | 13 | 13 |
| HK | Հոնգ Կոնգ | 3 | | 3 |
| HU | Հունգարիա | 1 | 24 | 25 |
| ID | Հունգարիա | 1 | | 1 |
| IE | Իռլանդիա | 5 | 10 | 15 |
| IL | Իսրայել | | 2 | 2 |
| IN | Հնդկաստան | 17 | 6 | 23 |
| IR | Իրան | 1 | 9 | 10 |
| IS | Իսլանդիա | | 1 | 1 |
| IT | Իտալիա | 7 | 126 | 133 |
| JE | Նորմանդյան կղզիներ | 1 | | 1 |
| JP | Ճապոնիա | 32 | 56 | 88 |
| KR | Կորեայի Հանրապետություն | 58 | 36 | 94 |
| KY | Կայմանյան կղզիներ | 8 | | 8 |
| KZ | Ղազախստան | 7 | 24 | 31 |
| LB | Լիբանան | 1 | 1 | 2 |
| LI | Լիխտենշտայն | | 6 | 6 |
| LV | Լատվիա | | 17 | 17 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| LT | Լիտվա | 1 | 12 | 13 |
| LU | Լյուքսեմբուրգ | 4 | 39 | 43 |
| MA | Մարոկկո | | 1 | 1 |
| MC | Մոնակո | | 2 | 2 |
| MD | Մոլդովայի Հանրապետություն | | 6 | 6 |
| MK | Մակեդոնիայի Հանրապետություն | 6 | | 6 |
| MT | Մալթա | 2 | | 2 |
| MX | Մեքսիկա | 1 | | 1 |
| MY | Մալազիա | 1 | | 1 |
| NL | Նիդերլանդներ | 9 | 53 | 62 |
| NO | Նորվեգիա | | 3 | 3 |
| NZ | Նոր Զելանդիա | | 4 | 4 |
| OM | Օման | 6 | | 6 |
| PA | Պանամա | | | 0 |
| PL | Լեհաստան | 1 | 22 | 23 |
| PR | Պուերտո Ռիկո | | 1 | 1 |
| PT | Պորտուգալիա | | 1 | 1 |
| RO | Ռումինիա | | 5 | 5 |
| RU | Ռուսաստանի Դաշնություն | 51 | 272 | 323 |
| SA | Սաուդյան Արաբիա | | | 0 |
| SC | Սեյշելյան կղզիներ | | 1 | 1 |
| SE | Շվեդիա | 1 | 9 | 10 |
| SG | Սինգապուր | 4 | 13 | 17 |
| SI | Սլովենիա | | 16 | 16 |
| SK | Սլովակիա | | 8 | 8 |
| TH | Թաիլանդ | 2 | | 2 |
| SM | Սան Մարինո | | | 0 |
| TR | Թուրքիա | 2 | 124 | 126 |
| TW | Տայվան | 1 | | 1 |
| UA | Ուկրաինա | 4 | 58 | 62 |
| USA | ԱՄՆ | 102 | 219 | 321 |
| UZ | Ուզբեկստան | | 2 | 2 |
| VG | Վիրջինյան կղզիներ | 17 | 33 | 50 |
| VN | Վիետնամ | | 2 | 2 |
| Ընդամենը | | 1717 | 2268 | 3985 |

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2016 թվականին հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 23 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 93 գյուտի, 44 օգտակար մոդելի արտոնագրերի, 23 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1564 գրանցված ապրանքային նշանների մասին, ընդգրկվել են նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

2016 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար:

Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2015 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2015 թվականի տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների վերաբերյալ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Ի կատարումն «Էլեկտրոնային կրիչների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 էլեկտրոնային կրիչներ, որտեղ զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 93 գյուտի և 44 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են:

2016 թվականին շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փո-

*խանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:*

*Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության աշխատանքների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը: Գործակալությունը վերազինվել է 11 համակարգչով, 4 տպիչով, 1 սքաներով, համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները:*

*Ապահովվել է գործակալության պաշտոնական կայքի և էլեկտրոնային փոստի սերվերի օպերացիոն համակարգի և ծրագրային ապահովման արդիականությունը և անխափան աշխատանքը, ապահովվել է ողջ համակարգի տվյալների անվտանգությունը:*

*Իրականացվել է համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի ախտորոշում և անսարքության վերացում:*

# ԳՐԱՆՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ

*Մտավոր սեփականության բնագավառի << օրենսդրությանը համապատասխան գործակալությունը սկսած 1995 թվականից իրականացնում է արդյունաբերական սեփականության գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման հետ կապված դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:*

*Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 2506 դիմում, որոնցից 175-ը՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 33-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 6-ը՝ ապրանքային նշանների ենթալիցենզիաների մասին, 5-ը՝ ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, 4-ը՝ ապրանքային նշանների ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցելու մասին, 1-ը՝ ապրանքային նշանի լիցենզիան չեղյալ հայտարարելու մասին, ինչպես նաև 1-ը՝ արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու մասին, 4-ը՝ արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ արտոնագրի լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, 1-ը՝ արտոնագրի լիցենզիան չեղյալ հայտարարելու մասին, 1-ը՝ արդյունաբերական նմուշի լիցենզիան գրանցելու մասին, 1-ը՝ արդյունաբերական նմուշի լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, 1462-ը՝ ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, 276-ը՝ գյուտերի, օգտակար մոդելների արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 535 փոփոխություն:*

*Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձանց միջև:*

*Վերջին վեց տարիներին գրանցված իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման պայմանագրերի թիվը բերված է աղյուսակ 1-ում:*

*2016 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1564 ապրանքային նշանների վկայագրեր, 93 գյուտի արտոնագրեր, 44 օգտակար մոդելների արտոնագրեր և 23 արդյունաբերական նմուշների վկայագրեր:*

Աղյուսակ 4

| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 |
|---|---|---|---|---|---|---|
| Իրավունքի փոխանցման պայմանագրեր | 56 | 101 | 79 | 81 | 121 | 179 |
| Լիցենցիայի, ենթալիցենզիայի տրամադրման պայմանագրեր և պայմանագրերում կատարված փոփոխություններ | 24 | 25 | 31 | 34 | 17 | 50 |
| Ֆրանչայզինգի պայմանագրեր | 1 | 5 | 2 | 1 | 0 | 4 |
| Գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը | 83 | 132 | 116 | 178 | 138 | 233 |

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Միջազգային համագործակցության շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը համագործակցում է միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ:*

*Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:*

*Գործակալության մասնագետները կանոնավոր մասնակցել են Մտավոր սեփականության ոլորտին վերաբերող ԵՏՄ համաձայնագրերի քննարկմանը՝ հանդիպումների և տեսակոնֆերանսների միջոցով:*

*2016 թվականի նոյեմբերին 22-23-ին Երևան քաղաքում անցկացվեց «Անտիկոնտրաֆակտ-2016» չորրորդ միջազգային համաժողովը, որը նվիրված էր մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության խնդիրներին և արտադրանքի ապօրինի շրջանառությանը հակազդելուն:*

*Ֆորումում ակտիվ մասնակցություն ունեցան Մտավոր սեփականության գործակալության աշխատակիցները:*